

անմահութեան, և ժամանակաւորը անժամանակին: Քրիստոսի ճշմարիտ յարութիւնը իր եկեղեցին է, անոր կաղմաւորած քրիստոնէական կեանքը, և անկէ ծնած տիեզերական քաղաքակրթութիւնը:

Սերմանուած, բայց վերընձիւղումի վիճակին ենթարկուած ցորենահատն է Քրիստոս, իբր հաւատք և կեանք, որ դարերէ ի վեր կ'աճի և կը դարձանայ իր եկեղեցիով, պարզուած զերեզմանի խորհուրդին մէջ:

Այդ ազուոր հասկին հատիկներէն մէկն ենք մենք ևս, իբր օզդ և եկեղեցի միանգամայն: Մասնակից եղած ենք իր մահուան, ու կը հաւատանք իր չնորհիւ մասնակից ըլլալ իր յարութեան: Ո'չ մէկ ազդ պիտի կրնար մեզի չափ իրաւունքով ըսել Առաքեալին հետ. «Զչարչարանս Քրիստոսի ի մարմնի իմում կրիմ», ու չկայ նոյնպէս ժողովուրդ մը, որուն համար կարելի ըլլայ իրաւամք ըսել. «Յոյս նոցա լի է անմահութեամբ»: Գեղեցիկ ու սրտառուչ ըլլալէ աւելի բան մըն է խաչուած ժողովուրդներու ողբերգութեան տեսարանը գալիք յարութիւններու յոյսով:

Ժողովուրդ Հայոց, ի սփիւռս աշխարհի տարտղնուած, զերեզմանին խորհուրդը չմթազնէ թող հոգիդ, մահէն ու թաղումէն վերջ կայ դեռ յարութեան ճշմարտութիւնը. այն ճշմարտութիւնը որուն հաւատացիր ու սպասեցիր դարերով, և որուն կը հաւատաս տակաւին, պատռուած կողերով և արցունքոտ աչքերով:

«Փա՛ռք յարութեան քո, Տէր». երգէ՛ այդ փառքը, անոր մէջ դուն երգած պիտի ըլլաս նաև քու յարութեանդ փառքը:

ԽՄԲ.



#### ՀԱԿԱՏՔԻ ԵՒ ՄՏԱՄՄԱՆ ՑՈԼՔԵՐ

#### Ն Ե Բ Ք Ի Ն Վ Ե Բ Ա Շ Ն Ո Ւ Թ Ի Ւ Ն

Զարմանեց կամ հետաքրուրիւնը չե՛ որ մժին մէջ պիտի արթնցնեն հոգեւոր նմարտութեանց տենչը: — Ռամիկ դիւրահաւանուրիւնը եւ զիտական հետազօտութիւնը որուն հաւատացիր ու սպասեցիր դարերովսկու անկարաղ են մարդուն տալու՝ ինչ որ արմատական կերպարանափոխութեան մը բարոյական համելը կը պահանջէ:

Առու համար անետամիեն բանն է վերածնունդը, այսինքն ա՛յնպիսի ծնունդ մը, որուն պատճառը կամ ծնուցիչ զօրուրիւնը մարդկային եւ երկրաւոր Եղանակէն արտախոյ եւ զերիմերոյ կարգի մը՝ Աստուծոյ կամին մէջ ըլլայ նոյն իսկ:

Վերածնունդը ոչ թէ վերսին կոմ կրկին ծնիլին է, ինչպէս ծիծաղելի բաննամութեամբ կը հասկնար Յիսուսի ժամանակակից ու աբբիական զիտուրինը, այլ վերէն կոմ վերուստ ծնունդը, որ մարդուն հոգին Աստուծոյ հետ յարաբերութեան մէջ զնող ներգործութեամբ կը կատարի, մեղք սրբացումով (= ջուրով) եւ անեղծական կեանեի նոր սկզբունքի մը տղորումով (= հուրով):

«ԱԻԵՏԱՐԱՆԻ ՃԱՄԲԷՆ»